

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2017թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ուղղությամբ ՀՀ սփյուռքի նախարարության իրականացրած աշխատանքների վերաբերյալ

2017թ. գերակա խնդիրները եղել են վեցը, որոնց ուղղությամբ կատարվել են բոլոր նախատեսված ծրագրերը:

1. Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում

Նպատակային աշխատանքներ են տարվել Սիրիայից Հայաստան տեղափոխված հայերի ինտեգրման, կեցության, կրթության, առողջապահության, աշխատանքի տեղավորման և այլ հարցերի լուծման ուղղությամբ: Մշակվել և կատարելագործվել են տարբեր գերատեսչությունների հետ համագործակցության մեխանիզմները՝ գործում է միջգերատեսչական հանձնաժողով, աշխատանքային խումբ, արագ արձագանքման խումբ և թեժ գիծը: Իրականացվել են տասնյակ ձեռնարկներ, հանդիպումներ, քննարկումներ, ապահովվել է հետադարձ կապ: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ կազմակերպվել է 5 գործարանների բացում, օժանդակություն է ցուցաբերվել բիզնես ծրագրերի կազմմանը: Մշակվել և շահագրգիռ կառույցներին է ուղարկվել «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների ռազմավարության» նախագիծը: Ներկայումս հավաքվում են առաջարկությունները և դիտողությունները:

2. Հայապահպանության համար և ուժացման դեմ պայքարում սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացում

- 2017թ. «Սփյուռք» ամսուային դպրոցի 5 ուղղություններով դասընթացներին մասնակցել է 266 սփյուռքահայ 30 երկրից, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է շուրջ 100 մարդով:
- 2017թ. Սփյուռքի երիտասարդների «Արի տուն» հայրենաճանության ծրագիրն իրականացվել է 9 փուլով, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է 1055 սփյուռքահայ երիտասարդ 36 երկրից: Ծրագրի շրջանակներում (ամեն օր) կազմակերպվել են հայոց լեզվի արագացված դասընթացներ:
- ԱՄՆ-ի հայկական կրթօջախներում Երևանից ուղարկված մասնագետի ուժերով կազմակերպվել են 27 կրթօջախի 50 ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:
- Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ, ինչպես ամեն տարի, իրականացվել է «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար-2017» մրցանակաբաշխությունը: Մտացվել են ավելի քան 160 անհատի և կազմակերպության հայտեր մոտ 20 երկրներից: Արդյունքները կամփոփվեն 2018 թվականի սկզբին:
- Նախարարության կողմից 37 երկրից ավելի քան 200 Սփյուռքի հայկական կրթօջախների առաքվել են մոտ 87 000 կտոր դասագիրք և ուսումնասօժանդակ նյութեր:
- Նախարարության աջակցությամբ Սփյուռքում ստեղծվել է 16 նոր մեկօրյա դպրոց:
- Մայրենի լեզվի հեռավար ուսուցման ՀԲԸՄ AVC վիրտուալ համալսարանի ուսուցման մասին տեղեկատվությունը տարածվել է Սփյուռքի հայ համայնքներում: Նախարարության ծրագրերի մասնակիցների համար կազմակերպվել են AVC-ի շնորհանդեսներ և շրջայցեր:

3. Հայաստանի Հանրապետության ներդրումային ծրագրերին սփյուռքահայերի մասնակցության ապահովման գործուն մեխանիզմների ներդրում

Նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ սփյուռքահայերին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների սահուն իրականացմանն օգնելու համար՝ «Մեկ պատուհան» կառուցակարգը:

Նախարարության պաշտոնական կայքում բացվել է «Ներդրումներ Հայաստանում» բաժին, որտեղ ներկայացված են ներդրումներին առնչվող օրենսդրությունը, արտոնությունները, այլ նյութեր, բիզնես ծրագրեր (ավելի քան 200 ծրագիր) և այլն: Սփյուռքի գործարարներին ու հայկական առևտրաարդյունաբերական պալատներին են ուղարկվել բիզնես ծրագրեր, ինչպես նաև նրանց տեղեկացվել է

Հայաստանում ներդրումներ իրականացնելու բոլոր հարթակների մասին (ընդհանուր առմամբ շուրջ 1200 գործարարի):

Կազմակերպվել են 3 կլոր-սեղան քննարկումներ, Հայաստանում արդյունաբերության ոլորտում սփյուռքահայ ներդրողների արտադրանքների ցուցահանդես-վաճառք: Նախարարությունում կազմակերպվել են 30-ից ավելի հանդիպումներ սփյուռքահայ գործարարների հետ, որոնց ներկայացվել են Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը:

Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակներում սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել Հայկական առևտրային ցանցի (ՀԱՑ) 3-րդ գործարար ֆորումը, իսկ սեպտեմբերի 20-ին՝ ՀԱՑ-ի 5-րդ ընդհանուր ժողովը, որոնց մասնակցել է շուրջ 200 գործարար:

4. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական հիշողության ամրապնդմանն աջակցություն

Նախարարությունը կազմակերպել է «Հրանտ Դինք. 10 տարի անց» խորագրով կլոր սեղան-քննարկում՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական ինստիտուտների հետ:

Նախարարության պատվերով մի շարք գիտական հաստատություններ իրականացրել են Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ, որոնք տպագրվել են:

Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի «Արտաքին քաղաքականության օրակարգի» թեմատիկ ուղղության շրջանակներում տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության ճանաչում, ցեղասպանությունների կանխարգելում. քաղաքական և իրավական գործընթացները» նիստը:

5. «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ձևավորում և զարգացում

2016թ. հոկտեմբերի 20-24-ը Հայաստանում և Արցախում կայացած Լրագրողների 8-րդ համաժողովում սկիզբ է դրվել «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժմանը: Շարժումը մեծ ոգևորություն առաջացրել է և դրան միացել են Սփյուռքի համայնքային կառույցներ, կրթօջախներ, լրատվամիջոցներ: 2017թ. նախարարությունը հռչակել է «Արցախի տարի», որի շրջանակներում Սփյուռքի համայնքներում կազմակերպվել են Արցախի պատմությանը, մշակույթին, տնտեսությանը նվիրված ձեռնարկներ, դրամահավաքներ, նյութական օգնություն, լավագույն փորձի փոխանակում և այլն:

6. Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնում և մասնագիտական ներուժի օգտագործում՝ ՀՀ-ի և Արցախի տնտեսության զարգացման համար

Սեպտեմբերի 18-20-ը Երևանում անց է կացվել «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը: Համաժողովը անցկացվել 4 ուղղություններով՝ 16 նիստերի և 3 լիագումար նիստերի միջոցով: Համաժողովի ընթացքում տեղի է ունեցել 3 կլոր-սեղան քննարկում: Համաժողովի ավարտին ընդունված հայտարարությունում ուղենշվել են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հիմնական ուղղությունները և հետագա անելիքները: Համաժողովին մասնակցել է 1837 հոգի 71 երկրից (16 երկրից մասնակցել են առաջին անգամ), ընդ որում՝ 1363-ը՝ Սփյուռքից: Համաժողովին հիմնական զեկույցով հանդես է եկել 106 հոգի 17 երկրից: Համաժողովին հարակից ելույթներով և հարցադրումներով հանդես է եկել 168 հոգի 26 երկրից:

ՀՀ սփյուռքի նախարարությունը ակտիվ համագործակցել է «Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության, Ճարտարապետների և Ճարտարագետների համահայկական ընկերակցության, «Իրավաբանների համահայկական խորհրդատու» ՀԿ-ի, Հայկական առևտրային ցանցի հետ՝ իրականացնելով մի շարք միջոցառումներ: Միևնույն ժամանակ աշխատանքներ են տարվել նոր համահայկական ընկերակցությունների ստեղծման ուղղությամբ:

2017թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված ՀՀ կառավարության որոշումների 2 նախագծերը ժամանակին ներկայացվել են ՀՀ կառավարություն: